

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԻ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ (Երկրաշարժի 31-րդ Տարեկից)

31 տարի առաջ գրանցուած երկրաշարժը քաղաքական առումով ցնցեց ամբողջ Խորհրդային Միութիւնը: Հայաստանին օժանդակութեան փութաց ամբողջ աշխարհը: Ըստ եութեան, քանդուեցաւ երկաթե վայրագոյրը, երբ տարբեր երկիրներէ Խորհրդային Միութիւն մուտք գործած փրկարար ջոկատները կամ բարեփորական կազմակերպութիւնները ականատես եղան քաղաքաշինութեան եւ ընդհանրապէս շինարարական համակարգի որակի, մակարդակի, դիրաբեկութեան: Փութումը քաղաքներուն կը խախտէր փութումը ամբողջ համապետական համակարգի մը, որ Խորհրդային Միութիւն կը կոչուէր:

Յնցում մը իր ունենալիք հետեանքներէն անհամաչափ ծանր իրավիճակ ստեղծած էր: Նոյնը նաեւ հասարակական-քաղաքական առումով, երբ յատկապէս ազգային իրմունքով ծայր պիտի առնէին ժողովրդային շարժումներ՝ աւելի ազատ կարգերով ապրելու մղումի դրսեւորումներ, անկախացման քայլեր:

Եթէ Հայաստանը ցնցած երկրաշարժը համաշխարհային համոզում կը փոխանցէր Խորհրդային Միութեան քաղաքաշինութեան դիրաբեկութեան մասին, դարձեալ նոյն երկրին մէջ արձանագրուած կենսոյրոտային խնդիրներով ծայր առած եւ շուտով ազգային եութիւն ստացած ցոյցերը պիտի խախտը՝ շէին ամբողջ կայսրութեան փութումը:

Այս տեսութեան վաւերականութեան մասին դեռ պիտի խօսի քաղաքագիտական կամ հասարակագիտական գրականութիւնը՝ պեղելով իւրաքանչիւր փառ շէքի կամ կայսրութիւն կազմած աղիսի փութ գալու մանրամասնութիւնները: Հայաստանը՝ շրջադարձային կէտ է թէ՛ համաշխարհային եւ թէ՛ ազգային առումներով:

Նման ճակատագրորոշ հունաւորում ապահոված երկրին մէջ սակայն երկրաշարժէն 31 տարի ետք տաւալին կարելի չէ եղած վերացնել երկրաշարժի հետեւանքները՝ ամբողջութեամբ: Վերջին անտուն բնակիչի բնակարանամուտով միայն կարելի է հաստատել, որ Աղւտի գօտի հասկացողութիւնը ընդհանրապէս ջնջուած է Հայաստանի Հանրապետութեան տարածքէն:

Աղւտի. Աղւտի գօտիի վերացման առաջադրանքը աւելի ընդհանուր տեսք պիտի առնէ Հայաստանի Հանրապետութեան քաղաքներու համաչափ զարգացման հրամայականի առարկայացումով: Չարգացող Գիւմրին է, որ երկրաշարժի արհաւիրքն ու հետեւանքային իրավիճակները պիտի ցրուէ ընդմիջտ՝ իրողապէս դառնալով հանրապետութեան երկրորդ մեծ քաղաքը:

Երեւանակերտութենէն բազմակերտորն քաղաքներով յատկանշուող հանրապետութեան վերածումն է միայն, որ կրնայ խօսիլ տնտեսական յեղափոխութեան մասին: Իսկ այդ ճանապարհին՝ Գիւմրին կարեւորագոյն մենկարկային կէտ կը նկատուի: Պատահական չէր անշուշտ Անկախութեան տօնին համապետական տարողութեամբ նշումը Գիւմրիի մէջ, իբրեւ կերտնական հանդիսաքաղաք այս պարագային: Մինչ համակողմանի քաղաքականութիւն կը կիրարկուի երկրորդ միջազգային օդակայանը բանալու տարբեր ուղղութիւններով թռիչքներու իրականացումը ապահովելու համար: Յատուկ մրցումակ սակագիւներով տնտեսուող տրոնդորակումով կը թուի, որ յատկապէս երուպական քաղաքներ-Գիւմրի օդային կամուրջը աշխուժացնելու ծրագիր մշակուած է:

Երկրորդ միջազգային օդակայանը գործարկելու ծրագիրը ռազմավարական նշանակութիւն ունի շրջափակուած երկրին համար: Երբ ցամաքային փակուած ուղիներ կան, օդային տարածքները խճողելու մօտեցումը պետք է բանի արդիւնաւետ: Իսկ յատկապէս երուպական երկիրներու ուղղութեամբ օդային եթթելը քաղաքական անցանքներու կոչուած նուազագոյն սակագիւներու ապահովման փորձերը կ'առնչուին անպակաս արտաքին քաղաքականութեան գերակայ ուղղութիւններէն մէկուն հետ: Խոսքը երուպական Միութիւն - Երեւան տարբեր բնագաւառներու մէջ համագործակցութիւնը խորացնելու միտումներուն կը վերաբերի:

Գիւմրիի քաղաքամէջի շինարարական աշխատանքները այնպէս կ'ընթանան, որ քաղաքը պահպանէ իր ուրոյն պատմական դիմագիծը: Քաղաքաշինութեան կանոնները պահպանելու ձգտումները կ'երեւին յատկապէս շէքներու ճակատներու պատմական ոճը չխաթարելու առումով:

Գիւմրիի զարգացումը ուրեմն ո'չ միայն Աղւտի գօտիի վերջնական արձակում, այլ նաեւ հանրապետութեան համաչափ զարգացման քաղաքականութեան առաջին մենկարկային փութը պիտի ըլլայ: Արտագաղթի հոսքի նուազեցման միտումներու վիճակագրական տուեալները կը սկսին համոզիչ հնչել, երբ Երեւանէն բացի Գիւմրին եւ այլ քաղաքներ, մարդը ու սահմանամերձ շրջաններ խճողուին մարդորժող: Իսկ այս մէջը, Ներկայացուող թիւերէն աւելի ժողովրդագրական պատկերի ճնշածամի յաղթահարումը արձանագրող ամէնէն համոզիչ փաստը կրնայ ըլլալ՝ տնտեսական յեղափոխութեան արդիւնաւորումը հաստատողը:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՄԵՐԺԵ ՍԱՄԻՐ ԽԱԹԻՊԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԵԱՆԱԿՈՒՄԸ՝ ԿԱՌՉԱԺ ՄԱԼՈՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՒ ԿԱՌՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

Վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւններուն ճշդումը լիբանանեան փողոցը գոհունակ ու հանդարտ պահելու փոխարէն դարձեալ բռնկեցուց զայն՝ վերածուելով վարչապետի հիմնական թեկնածու Սամիր Խաթիպը մերժող ցոյցերու, ինչպէս նաեւ մասնագէտներու եւ քաղաքական կառավարութիւն մը կազմելու դէմ բողոքի ցոյցերու:

Նախանցեալ երեկոյեան շրջանառութեան մէջ դրուեցան լուրեր Սամիր Խաթիպի առողջական վատ իրավիճակին մասին, սակայն երէկ անոր տեղեկատուական գրասենեակէն հրապարակուեցաւ հաղորդագրութիւն մը, որուն մէջ շեշտուեցաւ, որ անոր առողջութիւնը լաւ է:

Այլ շրջագիծի մէջ, երէկ տեղի ունեցաւ նաեւ այլ ցոյց մը, որ զօրակցութիւն յայտնեց հրաժարեալ վարչապետ Սաադ Քարիրին՝ ընդգծելով, որ միայն Հարիրի կրնայ վերստանձնել վարչապետի պաշտօնը:



Կը խախտեալ, որ այսօր առաւօտեան Հարիրիի Կեդրոնական Պէյրութի բնակարանին կից կայանայ անոր զօրակցութիւն յայտնող այլ ցոյց մը:

Ժողովրդային շարժումին մաս կազմող ցուցարարները երէկ երեկոյեան յայտարարեցին, որ կ'ուղղուին երկուշաբթի օր ընդհանուր գործադուլ յայտարարելու եւ ճամբաները փակելու՝ իբրեւ բողոք նոր կառավարութեան կազմութեան դէմ, նկատի ունենալով, որ անիկա զուտ մասնագէտներ բաղկացած կառավարութիւն մը չէ:

Շար.ը՝ էջ 2


ՏՈՔԹ. ՌՈՒՆԵ ԵՌԻՆԵՍԻ ԳԼԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՑԵԼԵՑ ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻԻ

Ժողովրդային շարժումէն պատուիրակութիւն մը՝ զլխաւորութեամբ տոքթ. Ռոնալ Եռնեսի, երէկ՝ ուրբաթ, 6 դեկտեմբերին այցելեց «Շաղ-գոյեան» կերտին եւ հանդիպում ունեցաւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բազարտունիի հետ: Հանդիպման ընթացքին պատուիրակութեան անդամները իրենց պահանջները ներկայացուցին՝ երկրին ներկայ տագնապէս դուրս գալու գծով:

Երեսփոխան Բազարտունիի ողջունեց ժողովրդային ցատումին մասնակիցները եւ յայտնեց, որ «առաջին իսկ օրէն ոչ միայն զօրակցեցանք շարժումի հիմնական նպատակները եղող ընկերային արդարութեան կենցարային պահանջներուն եւ փոսածութեան դէմ պայքարի իրաւունքներուն, ինչպէս նաեւ իւրացումը հարստութեանց վերադարձի իրաւունքին, այլ նաեւ մենք խախտեալ բազմիցս նման պահանջներ ներկայացուցած էինք»:

Երեսփոխան Բազարտունիի նախընտրեց պատուիրակութեան անդամները կոչել «Յերափոխական երիտասարդներուն» փոխարէն «Հայրենիքի զաւակներ», որովհետեւ հայրենիքը թէ՛ յեղափոխութեան եւ թէ՛ քաղաքական դէմքերէն աւելի գերակայ է:

Այս պատուիրակութեան ներկայացուցած յուշագիրին 5 կէտերէն երեքին անվերապահօրէն աջակցութիւն յայտնեց՝ աւելցնելով, որ պետք է յստականայ «անկախ» եւ «մասնագէտ» հասկացողութիւնը



կառավարութեան կազմի պարագային, ինչպէս նաեւ կանխապէս ընտրութիւններու կապակցութեամբ անհրաժեշտ գտաւ զանոնք կայացնել ընտրական նոր, արդար եւ արդիական օրէնքով:

Կցուած՝ արաբերէն բնագիրը:

«ԻՐԱՆԸ ՊԵՏԵ Է ՉՐԿԵԼ ԱՅՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԵՆ, ՈՐՈՆՑՄՈՒՎ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՇՐՋԱՆԻՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ»

Կ'ԸՍԵ ԺՈՊԵՅՐ

Սեւտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Ատէ Ժուպէր յայտնեց. «Իրան ամբողջ շրջանին կը սպառնայ, եւ այլեւս կարելի չէ անոր յարձակողականութիւնը հանդուրժել»:

«Իրանը պետք է զրկել այն գործիքներէն, որոնցմով կը սպառնայ շրջանին ու աշխարհին», յայտարարեց ան՝ նշելով. «Իրան կը հաւատայ յեղափոխութեան արածման սկզբնականներէն չի յարգեր երկիրներու գերիշխանութիւնը»:

«Իրանի նկատմամբ պետք է խիստ ըլլալ, եւ ոչ ոք պատերազմի կը ձգտի», ըսաւ

«ՄՏԱԴԻՐ ԶԵՆԸ ՍՈՒՐԻԱՅԵՆ ՀԵՌԱՆԱԼ, ՆԱԽԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ ԶԱՐԱԶԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ»

Կ'ԸՍԵ ԶԱՌՈՒՇՕՂՈՒ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Զաւուշօղլու յայտնեց. «Թուրքիա մտադիր չէ Սուրիայէն հեռանալ՝ նախքան այդ երկրին մէջ տագնապի քաղաքական լուծումը»:

Ան նաեւ նշեց. «Ահաբեկչական ՏԱՀԵԸ խմբաւորման ու ժապիաթ Նուսրայի միջեւ տարբերութիւն չկայ»:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԵՐՔԷ «ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐ ՄՂԵԼՈՒ» ՅՈՐԳՈՐԻ ԱՌԿԱՅՈՒԹԻՒՆԸ



ՀՀ Դաշնակցութեան Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէեան «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանին հետ ունեցած զրոյցին ընթացքին հերքեց, որ ՀՀԴ Բիւրոյի նախկին ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան իշխանութեան դէմ այսպէս կոչուած «պարտիզանական մարտեր մղելու» յորդոր կատարած ըլլայ: «Բովանդակութենէ կտրուած, իրականութեան հետ առնչութիւն չունեցող ձեւակերպումներով հաւաքէն տեղեկութիւններ դրած են շրջանառութեան մէջ մարդիկ, որոնք այդ հաւաքին ներկայ չեն եղած», պարզաբանեց ան:

Շար.ը՝ էջ 10

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ 2020-Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ



Հայաստանի Ազգային ժողովը ընդունեց «Հայաստանի 2020-ի պետական պիտոճե»-ի նախագիծը՝ 77 թեր եւ 37 դէմ քուէներով:

Քուէարկութենէն ետք արդիւնքները արձանագրող լուսատախտակը ցոյց տուաւ 69 թեր ծայն, սակայն Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան յայտնեց, որ պիտոճի նախագիծին թեր քուէարկելու մասին յայտնած են գործուղման մէջ գտնուող պատգամաւորներ Գայեանէ

Շար.ը՝ էջ 10

ՀԵԼՍԻՆԵԴԱՆ ԿՈՄԻՏԷ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԵՄ-Ի ՀԱՄԱՔԻՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հելսինքեան կոմիտէն յայտարարութիւն հրապարակեց 3 դեկտեմբերին Հայաստանի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարարութեան առջեւ ՀՀԴ Հայաստանի երիտասարդական միութեան կողմէ կազմակերպուած հաւաքին վերաբերեալ:

Շար.ը՝ էջ 10

«ԶԵՄ ԿՐԱՐ ԸՍԵԼ, ՈՐ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՐՑԻՆ ՄԵՋ ՅԱՌԱՋԸՆԹԱՑ ԿԱՅ»

Կ'ԸՍԵ ՄԱՍԵՏԵՐՈՎ

«Ցաւօք սրտի, Միւսնոյի հանդիպումէն ետք եւ չեմ կրնար ըսել, որ Լեւոնային Ղարաբաղի տագնապի լուծման հարցին մէջ յառաջընթաց կայ: Այսօր տագնապի գօտիին մէջ յարաբերական անդորր է, սակայն միեւնոյնն է, յառաջընթաց չկայ: Հայաստանը նոյնիսկ մերժած է Ղարաբաղի մէջ պահուող Ազրպէյճանի քաղաքացիներու փոխանական մը թուրք բոլորի դիմաց՝ սկզբունքով», Պրաթիպալայի մէջ յայտարարած է Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Էլմար Մամետեարով:

«Թերթ» կը յիշեցնէ, որ Ազրպէյճանի մէջ կը պահուին Հայաստանի Հանրապետութեան երեք քաղաքացիներ՝ Արսէն Պաղտասարեան, Կարէն Ղազարեան եւ Չաւէն Կարապետեան:

Հայկական կողմին մօտ կայ Ազրպէյճանի երեք քաղաքացիներ, որոնցմէ երկուքը՝ ազրպէյճանացի հետախույզներ Տիլիամ Անքերովը եւ Շահպազ Կուլիեւը, յուլիս 2014-ին Արցախի Հանրապետութեան պետական սահմանը ապօրինի կերպով անցնելու, լրտեսութեան, ապօրինի կերպով գէնը ու զինամթերք կրելու, մարդու բացցայտա առնեալ գէլու եւ սպանութեան համար նոյն տարուան 29 դեկտեմբերին Արցախի Հանրապետութեան Ընդհանուր իրաւատւութեան առաջին ատենի դատարանին կողմէ դատապարտուած են համապատասխանաբար ցնէանս եւ 22 տարուան բանտարկութեան:

Շար.ը՝ էջ 10

ՆԱԽԸՊԳԱՀ ԱՌԻՆ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՆՊԱՍՏԷ, ՈՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՕԺԱՆԳԱԿ ԵՐԿԻՐՆԵՐԸ «ՍԵՏՐ»-Ի ՀՈԼՈՎՈՅԹԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԵՒ ԲԱՐԳԱԽԱՃԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ ՍԿՍԻՆ»



Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն երեկ նախագահական պալատին մեջ ընդունեց բրիտանական դրամատուներ եւ ներդրումային ընկերություններ ներկայացնող պատուիրակություն մը՝ ընկերակցութեամբ «Մորկը Սթեյկ» ամերիկեան դրամատան:

Նախագահ Աուն շեշտեց, որ երկրին տնտեսական եւ ելեմտական տաղնապին լուծումը պիտի ըլլայ կառավարութեան առաջնահերթությունը՝ անոր կազմութենէ անմիջապէս ետք:

Ան նկատել տուաւ, որ նախորդ կառավարութիւնը ուներ տնտեսական պատկերացում մը, որուն հիման վրայ կարելի պիտի ըլլար փրկել երկրին ու լիբանանեան տնտեսութիւնը՝ զայն վերածելով արդիւնաբեր տնտեսութեան:

Նախագահ Աուն հաստատեց, որ լիբանանեան ջուրերուն մէջ նաւթահորերու հորատումը Լիբանանը պիտի վերածէ նաւթ եւ կազ արտադրող երկրի մը:

Նախագահ Աուն հաստատեց, որ վարչապետի նշանակման պարտադիր խորհրդակցութիւնները պիտի կատարուին երկուշաբթի, 9 դեկտեմբեր 2019-ին, որոնց պիտի յաջորդէ կառավարութեան կազմութիւնը:

«Կառավարութեան կազմութիւնը պիտի նպաստէ, որ Լիբանանի օժանդակ երկիրները «Սետր»-ի հոլովոյթը շարունակեն եւ բարգաւաճման ծրագիրներ սկսին», հաստատեց նախագահ Աուն:

Ան անդրադարձաւ նաեւ ելեմտական որոշ դասաւորումներու, որոնք որդեգրուեցան ելեմտական վերջին նիստին ընթացքին՝ հաստատելով, որ անոնք ժամանակաւոր դասաւորումներ են, որոնք երկրին ելեմտական ներկայ պայմաններուն համար որդեգրուած են:

Նախագահական պալատի այցելուներէն եղաւ նաեւ նախկին երեսփոխան Հասան Եաագուպ, որ նախագահ Աունի հետ ըննարկեց լիբանանեան ներկայ իրադարձութիւնները:

«ԿՈՉ Կ'ՈՐԴԵՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒՆ ԱՅՍ ՏԱԳՆԱԳԻՆ ՏՈԿԱԼՈՒ՝ ՊԱՅՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԲԱՆԱՆԸ»

ՇԵՇՏԵՑ ՈԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸԸ



Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երեկ Պերթէի մէջ նախագահեց Լիբանանի բարօրութեան համար մատուցուած պատարագի մը, որուն ընթացքին յայտնեց, որ Լիբանանի մէջ կան կարգ մը երկիրներու դեսպանատուներ, որոնք կը դիւրացնեն լիբանանցիներուն, յատկապէս քրիստոնեաներուն արտագաղթը, կարծեք Լիբանան պատերազմի մէջ կը գտնուի:

Ռայի պատրիարքը նշեց, որ այդ դեսպանատուներուն անունները իրենք տակաւին չեն փափաքիր բացայայտել: Ռայի պատրիարքը կոչ ուղղեց լիբանանցի երիտասարդներուն տոկալու այս տաղնապին, ինչպէս կատարած են անոնց նախահայրերը՝ պահպանելու համար Լիբանանը:

«Ձեր իրաւունքն է երազել այնպիսի հայրենիք մը, որ կ'ապահովէ ձեր անվտանգութիւնը, քաղաղութիւնն ու նուազագոյն իրաւունքները: Բայց եւ այնպէս պէտք է համբերե՛ք եւ հանդուրժե՛ք, որպէսզի Լիբանանի վերեւ գտնուող սեւ-մուր ամպերը հեռանան», հաստատեց Ռայի պատրիարքը:

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱՆՔ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Երեքշաբթի, 10 դեկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Պուրճ Յամուտի Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ, Լիբանանի հայ երեք համայնքապետներու գլխավորութեամբ եւ հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական հոգեւորականներու ու հաւատացեալներու մասնակցութեամբ, Լիբանանի խաղաղութեան համար հաւաքական աղօթք պիտի կատարուի:

Կը հրաւիրենք լիբանանահայութիւնը միասնաբար աղօթելու Լիբանանի խաղաղութեան համար:

ԴԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՈՐԴԱՐԱՆԻ

ՀՈՈՍԻ ՄԷՋ

«ՀՈՍ ԿԸ ԳՏՆՈՒՄ ԶԵՉՄԷ ԽՆԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՐՅԵՐՈՒՆ ՄԻՋԱՍՏՈՂՆԵՐԸ ԴԵՌԱՑՆԷ»

ՇԵՇՏԵՑ ՊԱՍԻԼ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարարի պաշտօնակատար Ժըպրան Պասիլ երեկ Հոմսի մէջ իր մասնակցութիւնը բերաւ Եւրոմիջերկրականեան երկխօսութեան (Եւրոմեդ) Ե. Ժողովին, որուն ընթացքին իր արտասանած խօսքին մէջ ըսաւ, թէ լիբանանեան ինքնութիւնը արաբական ինքնութիւն է՝ աւելցնելով, որ ոմանք կը փափաքին զայն դէպի Արեւելք տանիլ, իսկ ուրիշներ՝ դէպի Արեւմուտք: «Մենք կ'ուզենք Լիբանանը պահել Արեւելքը Արեւմուտքին կապող կամուրջ մը, որ արդար լուծումներ կ'ապահովէ հիմնական երեկ տաղնապէսներու, որոնք են. արաբաեփայտութեան տաղնապը, արաբական-պարսկական տաղնապը եւ յատկապէս իրանեան-սեւտական տաղնապը», ըսաւ ան:

Պասիլ նշեց, որ Լիբանանի դեմ արտաքին ճնշումներու կողմէ պատրաստուող ջանքսին հետեւանքը պիտի ըլլայ սուրիական տաղնապին նման:

Ան աւելցուց, որ Լիբանանի մէջ յաղթողի եւ պարտուողի տրամաբանութիւնը մերժելի է՝ հաստատելով, որ անկիւա երկարատեւ չէ:

«Հոս կը գտնուիմ ձեզմէ խնդրելու համար, որ Լիբանանի հարցերուն միջամը-



տողները հեռացնէք», ըսաւ Պասիլ: Միւս կողմէ, ան ընդգծեց, որ Լիբանանի նաւթի եւ բնական կազի մարզը կրնայ վերածուիլ շրջանի կայունութեան եւ բարգաւաճման դարպասին:

Պասիլ հանդիպում մը ունեցաւ իտալացի իր պաշտօնակիցին՝ Լուիճի Տիմայոյի հետ: Զննարկուեցան երկկողմանի յարաբերութիւնները եւ զանոնք տնտեսական մարզին մէջ ամրապնդելու կարելորութիւնը:

Հանդիպումին ընթացքին Պասիլ շեշտեց պաղէստինեան անկախ պետութիւն մը ստեղծելու կարելորութիւնն ու սեւտական-իրանեան երկխօսութիւն կայացնելու անհրաժեշտութիւնը:

Ան աւելցուց, որ Լիբանանի մէջ գտնուող պաղէստինացի գաղթականներն ու սուրիացի տեղահանուածները կը կազմեն լիբանանցիներուն 40 առ հարիւրը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

●ԱԶԳԱՅԻՆ ազատ հոսանք կուսակցութեան տեղեկատուական գրասենեակը երեկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ խստիւ դատապարտեց Ճիւնիի իր գրասենեակին դեմ գործուած յարձակումը: Նշեց, որ առաւօտեան կանուխ ժամերուն անձնասթոյքներ Ազգային ազատ հոսանքի գրասենեակին վրայ նետուած են **քոթթել մուղղվելք**՝ պատճառելով նիւթական վնասներ:

●ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ հարցերու պետական նախարարի պաշտօնակատար Մահմուտ Զումարթի յայտնեց, որ Լիբանանի դեմ գործուած տնտեսական ահաբեկութեան նպատակն է պաղէստինցիները բնակեցնել եւ Իսրայէլի շահերուն ծառայող սահմանազնու կատարել:

●ԵԼԵՄՈՒՏԻՆԷՆ նախարարի պաշտօնակատար Ալի Հասան Խալիլ երեկ ստորագրեց շրջաբերական մը, որուն հիման վրայ չորս միլիարդ եւ իննգ հարիւր միլիոն լ. ոսկիի գումար մը պիտի յատկացուի ամէնէն աւելի համեստ դասակարգի ընտանիքներուն բաժնելու համար:

●ԱՐՏԱԶԻՆ առեւտուրի պետական նախարարի պաշտօնակատար Հասան Սըրատ յայտնեց, որ Սուրիոյ հետ յարաբերութիւնները սրբագրելու իմաստով արձանագրուած մեծամտութիւնը, ինչպէս նաեւ այդ յարաբերութիւններուն ընդմէջէն տնտեսական արդիւններ ու օգտակարութիւն քաղելու անտեսումը՝ Լիբանանին մեծ վնասներ հասցուցած է:

●ԱԶԱՍԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Հանի Զայայի յայտնեց, որ կարգ մը քաղաքական անձնաւորութիւններ կը մասնակցին Լիբանանը քանդելու աշխատանքին՝ որդեգրելով այնպիսի կեցածքներ, որոնք կ'ուշացնեն կառավարութեան կազմութիւնը:

●ԵՐԵՄՈՒՏԻՆԷՆ Նաամաթ Աֆրամ կոչ ուղղեց քաղաքացիներուն համացանցի

դրութեամբ իրեն հետ բաժնելու անունը վարչապետի այն թեկնածուին, որուն նշանակումը կը փափաքին՝ նոր կառավարութիւնը կազմելու համար:

●ԱԶԱՍԱԳՐՈՒՄ եւ բարգաւաճում պլոքի երեսփոխան Զասն Հաշմ կոչ ուղղեց կազմելու փրկութեան եւ համախոհական կառավարութիւն մը:

●ՆԱԽԿԻՆ վարչապետ Ֆուատ Սիւնիոն երեկ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ դեսպան Ալեքսանտր Չասիփիքը, որուն հետ ըննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ երկկողմանի յարաբերութիւնները:

ՆԱԽԿԻՆ նախարար Ալեն Խաթիպ հաստատեց, որ Լիբանան կը գտնուի մասնագետներու դիմակով՝ քաղաքական խորքով կազմուելիք կառավարութեան մը դիմաց:

●ՆԱԽԿԻՆ նախարար Մարունա Խէյրետտին ընդգծեց, որ իրենց գումարները դրամատուներուն պահ դրած լիբանանցիներէն ոչ ոք իր գումարները պիտի կորսնցնէ:

●ՆԱԽԿԻՆ նախարար Աշրաֆ Ռիֆի նշեց, որ արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար Ժըպրան Պասիլի, Հըզպալլայի եւ ներկայ իշխանութիւններուն նախապայմանները ընդունող անձնաւորութիւնը յաջողութեան յոյսեր չի կրնար ներշնչել:

●ՍԱՅՏԱՅԻ «Պահաւետիկ Հարիրի»-ի անուան մզկիթին կից տեղի ունեցաւ ցոյց մը, որուն ընթացքին Ազապի դէպքերու բանտարկեալներուն ընտանիքները գօրակցութիւն յայտնեցին իրենց գաւակներուն եւ հարազատներուն՝ պահանջելով, որ համաներման խոստումը յարգուի:

●«ԱԽՊԱՐ» օրաթերթին համաձայն, Հըզպալլան եւ Ամալ շարժումը կը հաստատեն, որ Սաատ Հարիրի դարձեալ վարչապետ պիտի նշանակուի՝ ֆրանսական եւ ռուսական երաշխիքներով:

ԺՈՂՈՎՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՄԵՐԺԷ ՍԱՄԻՐ ԽԱԹԻՊԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Աւելի ուշ Նշուեցաւ, որ արդէն իսկ մշակուած է ընդհանուր ծրագիր մը՝ արդիւնէն համար երեսփոխաններուն Պաապատ բարձրանալը, որպէսզի վարչապետի նշանակման խորհրդակցութիւնները տեղի չունենան:

Նշենք, որ Ժողովրդային շարժումի ցուցարարները երեկ առաւօտեան հրկիզուող անիւներով փակեցին Զապիքի ճամբան:

Իսկ Զասքասէն Նահատակաց հրապարակ կատարուած քայլարշաւի մը ընթացքին, ցուցարարները բողոքեցին դրամատային համակարգին դէմ:

Ժողովրդային շարժումին կողքին, լիբանանեան խորհրդարանի տարբեր պլոքներ եւ անկախ երեսփոխաններ յայտնեցին երկուշաբթի օրուան խորհրդակցութիւններուն մասին իրենց կարծիքն ու որդեգրելիք քայլերը:

Այս առումով, երեսփոխան Միշել Տահեր յայտնեց, որ ինք պիտի չմասնակցի վարչապետի նշանակման խորհրդակցութիւններուն, եթէ վարչապետի թեկնածուն Սամիր Խաթիպն է:

Երեսփոխան Նուհատ Մաշնուք հաստատեց, որ ինք **պլոքի** պիտի ենթարկէ վարչապետի նշանակման պարտադիր

խորհրդակցութիւններուն իր մասնակցութիւնը՝ յարգելով մայրաքաղաքի բնակիչներուն կամքը:

Նախկին վարչապետ Նեժիպ Միքաթիի նախագահած երեսփոխանական պլոքը հաստատեց, որ նոր վարչապետի նշանակման խորհրդակցութիւններուն ընթացքին իրենք թեկնածուն պիտի ըլլայ Սաատ Հարիրին:

Հօր հանրապետութիւն երեսփոխանական պլոքը ընդգծեց, որ որոշում տուած է ոչ ոքի անունը առաջադրել վարչապետի նշանակման համար:

Միւս կողմէ, կը նախատեսուի, որ խորհրդարանական այլ պլոքներ վաղը գումարեն արտակարգ նիստեր՝ որոշելու համար, թէ ի՞նչ ընտրանք պիտի կատարեն՝ վարչապետի նշանակման առումով:

●ՆՇԵՆԷ, որ Թաուհիտ հոսանքի ղեկավար Ռիւիւմ Ռահապ յայտնեց, որ երկիրը տնտեսական եւ ելեմտական փլուզումէ փրկելու համար Լիբանան իր գրաւը դրած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի գորակցութեան վրայ: «Փարիզի խորհրդաժողովը երկուշաբթի օրուան առաջ, կրնայ փոփոխութիւններ յառաջացնել վարչապետի թեկնածուներու անուններուն իմաստով», ըսաւ Ռահապ:

ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻ ԽՆԴՐԵՑ ՕԺԱՆԳԱԿԵԼ ԼԻԲԱՆԱՆԻՆ՝ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ



Հրաժարեալ վարչապետ Սաատ Հարիրիի տեղեկատուական գրասենեակը երեկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ Նշուեցաւ, որ դրամի տաղնապին հարցը լուծելու եւ քաղաքացիներուն համար հիմնական պետքեր ապահովելու ջանքերուն շրջագիծին մէջ, Հարիրի Նամակներ յղած է Լիբանանի բարեկամ շարք մը երկիրներու, որոնցմէ խնդրած է օժանդակել Լիբանանին՝ ապահովելու համար ներդրումային վարկեր, որպէսզի կարելի ըլլայ ապահովել սնունդի անվտանգութեան հետեւողականութիւնը եւ տարբեր մարզերուն անհրաժեշտ հում նիւթերը:

Այս շրջագիծին մէջ, Հարիրի Նամակներ յղեց Սեւտական Արաբիոյ Սալման ալն Ապտէ Ազիզ թագաւորին, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի, Եգիպտոսի նախագահ Ապտէ Ֆաթթահ Սիսիի, Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի, Չինաստանի վարչապետ Լի Քիքիանկի, Իտալիոյ վարչապետ Ճիուզեպիէ Զոնթրի եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյնի:

ԶԱՆԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ ՈՒՆԵՑԱՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՊԱՏՈՒԻՐԱՎՈՒԹԵԱՆ ՀԵՏ



Ելեմուտքի եւ պետական ամավարկի խորհրդարանական մայրու յանձնախումբը երեկ նախագահութեամբ երեսփոխան Իպրահիմ Զանաանի շարունակեց գումարել 2020-ի պետական ամավարկի ըննարկման իր նիստերը:

Նիստին ետք Զանաան յայտնեց, որ յանձնախումբը վաւերացուցած է մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու, արտաքին գործոց, մշակոյթի, տեղեկատուութեան եւ կենսոլորտի նախարարութիւններուն պիւտճէները:

Նիստին ներկայ գտնուեցան մշակոյթի նախարարի պաշտօնակատար Մուհամետ Տաուտ, կենսոլորտի նախարարի պաշտօնակատար Ֆատի ժրայսաթի, մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարի պաշտօնակատար Մուհամետ Ֆընէշ, տեղեկատուութեան նախարարի պաշտօնակատար Ժամալ Ժարրահ եւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Հանի Շմայթի:

Միւս կողմէ, Զանաան երեկ խորհրդարանի իր գրասենեակին մէջ ընդունեց Միջազգային դրամատան մէկ պատիրակութիւնը, որուն մաս կազմեցին Միջազգային դրամատան ելեմտական հարցերու ընդհանուր քարտուղար Ալֆոնսո Կարսիա Սորա եւ Միջազգային դրամատան Միջին Արեւելքի հարցերու շրջանային տնօրէն Սարուժ Զումար:

Հանդիպումին ետք Զանաան յայտնեց, որ 2020-ի բարեփոխուած ամավարկը, որուն պայմանները կը համապատասխանեն ներկայ ելեմտական իրավիճակին եւ անոր կարիքներուն, որպէս ազդակ մըն է՝ ուղղուած տեղական եւ միջազգային թեկնածուներու:

Զանաան հաստատեց, որ լիբանանեան քաղաքական եւ քաղաքացիական կողմերը պէտք է առանց մեծամտութեան ընդունին այդ ամավարկը եւ գործակցին, որպէսզի կարելի ըլլայ Լիբանանի համար փրկարար լուծումներ ապահովել:

ԾԻՒՆԻ ՍՈՒՐ ԶԱՐՈՒԹԻՆ ԵԿԵՂԵՑԻ ՍՈՒՐԵ ԵՒ ԱՆՍԱՀ ՊԱՏԱՐԱԳ

Ծիւնիի Ս. Յարութիւն եկեղեցոյ թաղական խորհուրդը ուրախութեամբ կու գայ յայտնելու, թէ կիրակի, 8 դեկտեմբեր 2019-ին, սուրբ եւ անմահ պատարագին պիտի հանդիսանայեա՛ն՝

Թեմի Բարեցան Առաջնորդ **ԳԵՐՇ. Տ. ՆԱՐԵԿ ԱՐԵՏԻՊԻՍԿՈՍ**

Յընթացս սուրբ պատարագի ծաղկեայ փիլոն պիտի ստանայ եկեղեցոյս հոգեւոր հովիւ **ՄՐԺ. Տ. ՍԻՄԵՈՆ ԶՆՅ. ԿԱՐԱԴԵՏԵԱՆ:**

Սիրով հրաւիրուած է մեր հաւատացեալ ժողովուրդը՝ մասնակցելու հոգեպարար արարողութեան:

ԾԻՒՆԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ԼԻՔԱՆԱՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ



Հինգշաբթի, 5 դեկտեմբեր 2019-ին, Արամ Ա. վեհափառ հայրապետին այցելեցին Լիբանանի թեմի Ազգային վարչության Կրօնական եւ Զաղաքական ժողովները՝ գլխավորությամբ թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսին։

Առաջնորդ սրբազանը, Նախ եւ առաջ, շնորհակալություն յայտնեց վեհափառ հայրապետին, որ 100 միլիոն լիբանանեան ոսկի յատկացուց հայ կարիքաւոր ընտանիքներուն եւ ընդհանուր գիծերով ներկայացուց Լիբանանի այժմու կացութեան ծիրին մէջ թեմին դիմագրաւած դժուարութիւններն ու յատկապէս Ազգային վարչութեան տնտեսական մտահոգութիւնները։ Խօսք առին Նաեւ Կրօնական եւ Զաղաքական ժողովներու ատենապետները։ Անոնք պարզեցին քահանայ հայրերուն կատարած ծառայութիւնը եւ առաջնորդարարին վարչական ու տնտեսական բնագաւառներուն առնչուած կարգ մը հարցեր։

Վեհափառ հայրապետը իր գնահատանքը յայտնեց առաջնորդ սրբազանին



Եւ զոյգ ժողովներուն, որոնք հակառակ մեզ շրջապատող տնտեսական դառն պայմաններուն, կը շարունակեն իրենց ծառայութիւնը բերել մեր ժողովուրդին՝ գլխատրութեամբ սրբազան հօր։ Ան թելադրեց, որ անհրաժեշտ է առաւելագոյնը կատարել՝ մեր ժողովուրդին կարիքներուն օգտակար ըլլալու գծով։

Այս առիթով, վեհափառ հայրապետը անգամ մը եւս շեշտեց, որ անհրաժեշտ է ունետր ազգայինները գործնապէս զօրաւ փիզ կանգնին մեր եկեղեցւոյ, դպրոցներուն, կառոյցներուն, ընտանիքներուն...

Աւարտին, ան դարձեալ վստահեցուց Ս. աթոռին անբողբոսական զօրակցութիւնը Լիբանանի հայութեան։

ԼԻՔԱՆԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՈՒ ՀԱՄԱՔ

«ՀԻՄԱՒ Է ՊԱՂԸ ՀԱՄՆԵԼՈՒ ՄԵՐ ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒՆ ԾՈՎ ԿԱՐԻՔՆԵՐՈՒՆ, ՈՐՊԷՍՁԻ ԱՆՈՐՔ ՆՈՒԱԶԱԳՈՅՆԸ ԱՆԿԱՐԳԱՌՆԱՆ, ԹԷ ԱՆՏԷՐ ԶԵՆ»

ՀԱՍՏԱՏԵՅ ՆԱՐԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ուրբաթ, 6 դեկտեմբեր 2019-ին, ժամը 5:00-ին, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռազոյն» սրահին մէջ, Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի հրաւերով, հայ երեք համայնքապետներ՝ Նարեկ արքեպիսկոպոս, Պէյրութի Հայ



կաթողիկէ պատրիարքական թեմի օգնական Գեորգ Եպս. Ասատուրեան եւ Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան Կեդրոնական մարմնի ատենապետ վեր. Բաֆֆի Մըրրեան հանդիպում մը ունեցան լիբանանահայ ընկե-

րային, բժշկական եւ ծառայողական կառոյցներու ներկայացուցիչներուն հետ։

Հանդիպումը սկսաւ «Տրունական աղօթք»-ով, որմէ ետք Նարեկ արքեպիսկոպոս ըսաւ. «Այսօր կեանքը իր բնական

Շար.Պ՝ էջ 10

ԱՊԱԳԱՅ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՎԱՐԺՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (14)

ՃՇՁՐԻՏ ԹԱՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ապագայ լրագրողներու վարժողական ծրագիրին շրջագիծին մէջ, երեկ երեկոյեան ժամը 5:00-ին, «Ազգակ»-ի խմբագրական կազմի անդամ Նարեկ Գալեմբերեան հանդիպում մը ունեցաւ ապագայ լրագրողներուն հետ։

Հանդիպումին ընթացքին անդրադարձ կատարուեցաւ ճշգրիտ թարգմանութեան կարեւորութեան մասին։ Ն. Գալեմբերեան ապագայ լրագրողներուն թելադրեց հեռու մնալ բառացի թարգմանութիւններէ՝ ընդգծելով, որ որեւէ լուր կամ յօդուած թարգմանելու պարագային պէտք է կեդրոնանալ իմաստին վրայ։

Ան ընդգծեց թարգմանաբար հրատարակուած որեւէ յօդուածի պարագային անոր աղբիւրը նշելու անհրաժեշտութեան վրայ։

Ն. Գալեմբերեան անդրադարձաւ գեղե-



ցիկ, պատշաճ եւ հետաքրքրական էջեր պատրաստելու թեքնիքներուն ու ձեւերուն՝ հաստատելով նաեւ խորագիրին հրապուրիչ ըլլալու կարեւորութիւնը։

Հանդիպումը ստացաւ զրոյցի բնոյթ, ուր ապագայ լրագրողները հանգիստ կերպով ուղղեցին հարցումներ եւ խօսեցան իրենց կարծիքին մասին՝ բացայայտելով էջ մը պատրաստելու պարագային իրենց նախասիրած մարզը։

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Երեկ՝ ուրբաթ, 6 դեկտեմբերի երեկոյեան «Շաղոյեան» կեդրոնին մէջ, Հայկական երեսփոխանական պլոքին հրաւերով հանդիպում մը տեղի ունեցաւ հայրենակցական միութիւններու վարչութիւններուն հետ։

Առաջին առիթով երեսփոխան Յակոբ Բագրատունի գեկուցում մը ներկայացուց ջաղաքական եւ զաղութային կացութեանց մասին՝ անդրադառնալով այն մարտահրաւերներուն, որոնք ստեղծուած են այս փուլին։ Ան անդրադարձաւ Նաեւ մօտիկ ապագային կատարուելիք աշխատանքներուն։

Հայրենակցական միութիւնները անդրադարձան իրենց կատարած ու կատարելիք աշխատանքներուն եւ ընկերային ծառայութիւններուն՝ շեշտը դնելով այն հանգամանքին վրայ, որ բոլոր ժամանակներէն աւելի այսօր իրենց իրենց կարելիութիւններու սահմաններուն մէջ պատրաստ են անալու հայրենակիցներուն կարիքներուն։

Շեշտը դրուեցաւ այս փուլին հաւաքական ճիգով ու համադրուած աշխատանքով ծրագիրներու մշակման ու աշխատանքային մարզերու ընդարձակման վրայ։

Ժողովականները շեշտեցին լիբանանահայ զաղութի կենտունակութեան ու աշխուժութեան պահպանման անհրաժեշտութիւնը եւ միացեալ ճիգով այս դժուար փուլը շրջանցելու վճռակամութիւնը։



Հայկական երեսփոխանական պլոքի անդամները պատասխանեցին ժողովականներու հարցումներուն եւ լուսաբանութիւններ տուին զանազան հարցերու մասին։

Օգտաշատ նկատուեցաւ այսպիսի հանդիպումներու տալու պարբերական կանոնաւոր բնոյթ, ինչպէս Նաեւ ամրացնելու հայրենակցական միութիւններուն միջեւ գործակցութիւնն ու համադրումի աշխատանքը։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԵ ՀՅԴ ԶՈՄԻ ԶԱՒԱՐԵԱՆ ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԳՐԱՄՆԵԱԿԻՆ

ՊԱՐԳԵՒՏԱՐՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԳԵՐԱԶԱՆՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ

Կազմակերպութեամբ ՀՅԴ ԶՈՄ-ի Չաւարեան Ուսանողական գրասենական, երեկ՝ ուրբաթ, 6 դեկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 7:30-ին, «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ հայկական երկրորդական վարժարաններու գերազանց աշակերտներու պարգևատրումի հանդիսութիւնը՝ ներկայութեամբ պատկան վարժարաններու տնօրէններու, ներկայացուցիչներու, աշակերտներու, ծնողներու եւ հարազատներու։

Չաւարեան ուսանողական գրասենական (ԶՈԳ) անունով Կայա Գարամիւսաեան ողջունելով ներկաները անդրադարձաւ այս տարեկան ասանդական ձեռնարկի շարժառիթին եւ նպատակին։

«Այս հանդիսութեան իմաստը խոր է այն իմաստով, որ այս աշակերտներուն փայլուն արդիւնքները կը փաստեն, թէ հայ դպրոցի ուսման մակարդակը ո՛չ միայն համահաւասար է օտար դպրոցներուն, այլ Նաեւ՝ թանկարժեք, նկատի ունենալով հայ դպրոցներուն հայապահպանման առաքելութիւնը», ըսաւ Գարամիւսաեան՝ ընդգծելով, որ ոչ մէկ մշակութային, հայրենակցական կամ մարզական միութիւն կը գոյատեւէ առանց հայ դպրոցին։ Ապա ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն մարմիններուն եւ միութիւններուն, որոնք նպաստած են սոյն ձեռնարկի յաջողութեան, ինչպէս՝ Պոլոն Համուտի եւ Այնճարի քաղաքապետութիւնները, Մարաշի եւ Ուրֆայի հայրենակցական միութիւնները, ԱՅՀԻԸ, Լիբանանահայ օգնութեան խաչը (ԼՕԽ), ԼՕԽ-ի «Արցախ» մասնաճիւղը, ԱՖԵՏ, «Սլիտ», ՄԵՆՁԱ, «Երազ թրավըլ» եւ «Փոյզ թրավըլ» հաստատութիւնները, փութ «Իշխանեան» եւ «Վարուժ Ռեսթօ»։

Օրուան պատգամախօսն էր Հայկազեան համալսարանի դասախօս Շաղիկ Գանտահարեան-Խիւտավերտեան, որ հանգամանօրէն արժեւորեց ձեռնարկին նշանակութիւնն ու պատգամը։ Ան դիտել տուաւ, որ արդարացի հպարտութիւն ներշնչող այս առիթը աշակերտներու կողքին կը վերաբերի Նաեւ անոնց ծնողներուն, ուսուցիչներուն եւ տնօրէններուն, որոնք միացեալ եւ ծրագրաւորուած գործակցութեան արգասիքն է նման բարձր մակարդակի ակադեմական յաջողութիւն ապահովելը։

«Իսկ Չաւարեան ուսանողական միութիւնը, համա-



հունչ իր հայեցի դաստիարակութեան սկզբունքներուն եւ իր դաւանած ազգային արժեքներուն, այս գովելի գործակցութեան ամբողջական իմաստաւորումը եւ ըստ Էուրեան արժանաւորութիւնը կու գայ տեսնելու եւ շեշտադրելու հայկական դպրոցի պարունակին մէջ, հայկականութեան եւ հայեցի դաստիարակութեան հիմքերու վրայ հաստատուած եւ գործող կրթական հաստատութիւններուն մէջ», յայտնեց Խիւտավերտեան՝ նշելով, որ նշեալ հարագատ միջավայրին մէջ ծնողներ, ուսուցիչներ եւ տնօրէններ արդար հպարտութեամբ կը մօտենան աշակերտներու իրագործումին։

Մէքերելով 19-րդ դարու իրլանտացի մտաւորական Օսքար Ուայլտի հետեւեալ խօսքը, թէ՛ «Յաջողութիւնը գիտութիւնն է, եթէ կան պահանջուած պայմանները, ուրեմն կայ Նաեւ արդիւնքը», Շաղիկ Գանտահարեան-Խիւտավերտեան ընդգծեց, որ յաջողութեան պայմանները կարելի է դասաւորագրել անհատական եւ հաւաքական ոլորտներու մէջ։

Անհատական մարզին մէջ յաջողութիւն երաշխաւորող հիմնական յատկանիշներն են յարատեւ եւ հաւատաւոր աշխատանք, ինքնաթելադրուած կարգապահութիւն, աշխատանքային հաւասարակշռուած դրոյթ, պատասխանատու լրջութիւն, ինքնադժգոյնութիւն բարձր մակարդակ, եւ այս բոլորը՝ աշխատասիրութեան առօրեայ եւ հետեւողական կիրարկումով։

Շաղիկ Գանտահարեան-Խիւտավերտեան մէքերեց

Շար.Պ՝ էջ 10

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺ. ԿԵԱՆՔ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՅ

Հայաստանի պատմության մեջ ամենասարսափելի եւ աներիչ երկրաշարժի օրից անցել է 31 տարի:

Երկրաշարժի պատճառով աներուեցին՝ Սպիտակը, Լենինականը (Գիւմրի), Կիրովականը (Վանաձոր), Ստեփանաւանը եւ հարիւրաւոր այլ բնակավայրեր: Չոհուեց 25 հազար մարդ, 19 հազարը հաշմանդամ դարձաւ, շուրջ կէս միլիոնը մնաց անօթեան:

Հոգեբան Իրինա Շատուրեանը խօսել է այն մասին, թե, արդեօք, կարողացել են հայերը յաղթահարել աղէտի հոգեբանական հետեւանքները, ինչպէ՛ս է այն ազդել ողջ մնացածների վրայ եւ ինչպէ՛ս յաղթահարել յետցնցումային ախտանիշը:

«Նովոստի-Արմենիա» գործակալութիւնը ներկայացնում է նաեւ Սպիտակի երկրաշարժի հետ կապուած տասը կարեւորագոյն փաստեր:

Փորձանքը մենակ չի գալիս

Սարսափելի աղէտը վրայ հասաւ այն ժամանակ, երբ մեր երկիրն արդէն ընդունում էր Ազրայէճանից եկած առաջին փախստականներին (որոնք փրկուել էին հայկական ջարդերից, խմբ): Երկրաշարժի հետեւանքներն այնքան սարսափելի էին, որ մինչեւ հիմա զգացում են», ասաց Շատուրեանը:

Նրա խօսքով, հէնց երկրաշարժից յետոյ Հայաստանի բնակչութեան մօտ սկսեցին արտայայտուել վախեր, սթրեսի հանդէպ անկայունութիւն: Այդ ամէնն էլ ւաւելի խորացաւ դարաբաղեան պատերազմի, շրջափական եւ դրանից առաջացած ծանր տնտեսական իրավիճակի պատճառով, ինչն իր հերթին յանգեցրեց աղէտի գօտուց զանգուածային արտագաղթի:

«Այս ամէնի պատճառով աղէտի գօտու բնակիչների մի ամբողջ սերունդ մեծացաւ ոչ լիարժեք ընտանիքներում, ինչն իր հետքը թողեց մարդկանց վրայ», ասաց Շատուրեանը:

Հայկական ոգին անկոտրում է

Հայերը փարատոցային ազգ են, որը կարողանում է յարմարուել ցանկացած պայմանների եւ հանգամանքների ու առաջ շարժուել: Հայերը հերթական անգամ հասկացան, որ կարող են համախմբուել», ասաց Շատուրեանը:

Նա յիշեց, որ հազուադէպ չեն եղել այն դէպքերը, երբ երկրաշարժի ժամանակ սեփական երեխաներին կորցրած մայրերը կրկին ծննդաբերել են՝ չնայած տարիքին եւ առողջական վիճակին: Երկրաշարժից յետոյ բոլորը հասկացան, որ չի կարելի մտածել միայն սեփական անձի, բարեկեցութեան մասին:

«Հայերը հազարամեակներ տեւող պատմութեան ընթացքում սովորել են յաղթահարել տարբեր դժուարութիւններ, աղէտներ, եւ չնայած այդ ամէնն ընդմիշտ մնում է ծինային յիշողութեան մեջ, մենք, ամէն դէպքում, գոյատեւում ենք», նշեց Շատուրեանը:

Մենք բոլորս պարտական ենք աղէտի գօտուն

«Չնայած ձեռք բերած փորձին՝ Հայաստանը ճիշդ գրայանգումներ չարեց: Մենք պէտք չէ յիշենք աղէտի գօտու մասին միայն տարեկիցի օրը: Պէտք է յիշել բազմաթիւ հաշմանդամների մասին, որոնց կեանքը շատ բարդ է անբարենպաստ Հայաստանում», նշեց Շատուրեանը:

Նրա խօսքով, դա, առաջին հերթին, մեզ է անհրաժեշտ, քանի որ ինչ-որ մէկի մասին հոգ տանելը, կարեկցանքը մեզ դարձնում են ւաւելի լաւը, ւաւելի բարի եւ գթասիրտ:

Կեանքը շարունակում է...

Հոգեբանը նշել է այն խորհուրդները, որոնք կ'օգնեն աստիճանաբար յաղթահարել յետցնցումային ախտանիշը, որն առաջացել է երկրաշարժի պատճառով:

«Անհնար է անդադար միայն սգալ, հարկաւոր է նաեւ գործել: Օրինակ՝ այցելել աղէտի գօտի, ինչ-որ բան հաւաքել կարիքաւորների համար, կազմակերպել մշակութային կամ այլ ծրագրեր», նշեց Շատուրեանը:

Տառք փաստ՝ Սպիտակի երկրաշարժի մասին

●Երկրաշարժից յետոյ ոչ մի երեխայ չյայտնուեց մանկատանը, իւրաքանչիւր հայ ընտանիք իր պարտքն էր համարում որդեգրել որբերին:

●Սպիտակն աներուեց 30 վայրկեանում (երկվայրկեան, հս.բ.): Երկրաշարժն ընդհանուր առմամբ ընդգրկեց երկրի տարածքի շուրջ 40 տոկոսը:

●Երկրաշարժի կենտրոնը Սպիտակ քաղաքն էր, երկրաշարժի ուժգնութիւնը կազմում էր 10 պալ, Լենինականում՝ 9 պալ, Կիրովականում՝ 8 պալ: Երկրաշարժից առաջացած ալիքը պտոյտ է գործել ողջ երկրագնդով մէկ, ցնցումներն զրանցուել անգամ Ասիայում, Ամերիկայում եւ Աւստրալիայում:

●Աւերիչ երկրաշարժից մի քանի օր առաջ զրանցուել էին ցնցումներ: Տեղական իշխանութիւնները չէին կարելորել դրանք, չէ՛ որ հաշուի առնելով քաղաքի տեղանքը՝ նման իրադարձութիւնները հազուադէպ չեն:

●Հազարաւոր հայեր օգնութեան հասան տուժածներին: Մարքաւորումների եւ անգամ գործիքների բացակայութեան պայմաններում մարդիկ օր ու գիշեր ձեռքով մաքրում էին փլատակները:

●1988 թ.-ի ձմեռը չափազանց ցրտաշունչ էր: Օդի ջերմաստիճանը կազմում էր գերոյից ցածր 35 աստիճան: Եւ անգամ Նրանք, որոնց յաջողուել էր փրկուել երկրաշարժից, յայտնուեցին մահուան եզրին՝ մնալով անօթեան:

●Ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուրը ստեղծեց «Ազնաւուրը Հայաստանի համար» հիմնադրամը՝ միջոցներ հաւաքելով պատմական հայրենիքին օգնելու համար:

●Ողջ աշխարհը համախմբուեց՝ Հայաստանին օգնելու համար: Տարբեր երկրներից գալիս էին փրկարարներ, աւելի քան հարիւր երկրներ ուղարկեցին մարդասիրական օգնութիւն:

●Երկրաշարժից յետոյ առաջին օրերին Հայաստանում կործանուեց փրկարարներ եւ մարդասիրական օգնութիւն տեղափոխող երկու ինքնաթիւ:

●Մասնագետների հաշուարկներով, Սպիտակի երկրաշարժի ժամանակ երկրակեղեւի ճեղքման գօտում ազատւած ուժը հաւասարագօր էր տասը հիւլեական ռումբերի հզօրութեան:

«Նովոստի-Արմենիա»

ՔԱՆԴՈՒԱԾԸ՝ ՎԵՐԱԿԱՆԳՆԱԾ



Գիւմրիի անկախութեան հրապարակ



Ս. Ամենափրկիչ եկեղեցի



Դպրոց



Հացատուն

ԹԻՒԵՐ ԵՒ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Սպիտակի երկրաշարժը տեղի ունեցաւ 7 դեկտեմբեր 1988-ին, առաւօտեան ժամը 11:41-ին, Հայաստանի հիւսիս-արեւմուտքը: Անիկա դարձաւ երկրի նորագոյն պատմութեան ամենէն սարսափելի աղէտներէն մէկը

Երկրաշարժի ուժգնութիւնը

- Սպիտակ - 10 պալ
- Լենինական (Գիւմրի) - 9 պալ
- Կիրովական (Վանաձոր) - 8 պալ

Ամբողջովին աներուած է շուրջ 17 հազար բնակիչ ունեցող Սպիտակ քաղաքը եւ 58 գիւղ: Զանդուած է Գիւմրիին 80 ամ հարիւրը:

- ◆ Չոհուած է 25.000 հոգի
- ◆ Հաշմանդամ դարձած է 140.000 հոգի
- ◆ Մտուուն մնացած է 500.000 հոգի
- ◆ Աղէտի գօտիին մէջ յայտնուած է 970.000 հոգի

Զանդուած կամ կիսաւեր եղած է



- 210 հազար աշակերտի դպրոց
- 42 հազար մանուկի մանկապարտեզ
- 416 առողջապահական հաստատութիւն
- 2 թատրոն, 14 թանգարան, 391 գրադարան, 42 շարժապատկերի սրահ, 349 ակումբ եւ մշակութային տուն
- 230 արդիւնաբերական ձեռնարկութիւն

ԼՈՒՄԻՆԻՆ ՎՐԱՅ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԸ՝ ՇՆՈՐՀԻՒ ԿՆՈՋ ՄԸ

50 տարիներ առաջ Նիլ Արմաթորնկ իր ոտքը կը դներ լուսինին վրայ: Այս պատմական քաջագործությունը կարելի պիտի չլլար՝ առանց Մարկարեթ Համիլթոնի:

1963 թուականին 27 տարեկան Մարկարեթ Համիլթոն կ'ընդունուի Մասաչուսեթս ինսթիթյուտի օֆ թեքնոլոգի՝ ՏՀԹ-ի գիտաշխատանոց: Հոն մասնագետները կ'աշխատին ՆԱՍԱ-ի դեպի լուսին ճամբարորդության «Ափոլլո» ծրագրին հրթիռներուն համակարգիչի դրուժեան վրայ:

Իր խմբակին հետ Մարկարեթ պետք է մտածէ գտնելու միջոց մը՝ առաջըն առնելու այս սխալներուն, որոնք կրնան յառաջանալ մօտ ատենէն իբրեւ փորձ դեպի լուսին դրկուելիք, ոչ բնականաւոր անջրպետանաւի մը մէջ: Հրթիռը կը սկսի իր թռիչքը... Եւ խանգարումը մը տեղի կ'ունենայ: Մարկարեթի ստեղծած համակարգչային ծրագիրը անմիջապէս գործի կ'անցնի, եւ հրթիռի համակարգիչը դարձեալ կը բախի: Այս ամենը կարելի կ'ըլլայ միայն 72 քիլօցքեթ յիշողութեամբ մը, այսինքն հազարաւոր անգամներ նուազ հզօր՝ քան ներկայի շարժական համակարգիչ մը...




«Ափոլլո»-ի այս ծրագրին ծիրէն ներս ՆԱՍԱ կը նախատեսէ մարդով թռիչքներ դրկել դեպի մեր բնական արբանեակը: Փորձերը կը կատարուին իսկական չափով նմուշներու վրայ: Մարկարեթ կը դառնայ այդ խմբակին պատասխանատուն. այս հեղինակաւոր պաշտօնը Նոյնիսկ ներկայիս հազուադէպօրէն կը տրուի կնոջ մը:

Կը պատահի, որ գործի ժամերուն Մարկարեթ իրեն հետ գիտաշխատանոց կը բերէ իր 4 տարեկան աղջնակը՝ Լորըն: Օր մը փոքրիկ աղջիկը կը մտնէ անջրպետանաւի նմուշին մէջ եւ կը սկսի խաղալ ստեղնաշարին հետ: Երբ ան կը սեղմէ նախադրածակումի կոճակը մեքենան յանկարծ կը դադրի աշխատելէ:

Մարկարեթի համար ասիկա մեծ յայտնաբերում մը կ'ըլլայ. աստղա-նաւորդները կրնան Նոյնի սխալը գործել: Երբ ան այս հարցը կը փոխանցէ ՆԱՍԱ-ի, ՆԱՍԱ-ն ենթադրութեան կարելութիւն չի տար՝ ըսելով, որ իր մարդիկը չեն կրնար սխալիլ...

Հետեւաբար Մարկարեթ սրբագրութեան միջոց մը չ'անցընէր անջրպետանաւի համակարգիչին մէջ:

1968-ին, անջրպետին



մէջ թռիչքի մը ընթացքին «Ափոլլո 8»-ի աստղա-նաւորդներէն մէկը փոքրիկ Լորընին կատարած սխալը կը կրկնէ... ՆԱՍԱ անմիջապէս կը դիմէ Մարկարեթի: 9 ժամուան ճիգերէ ետք դեպի անջրպետամեքենայ դրկուած Նոր տեղեկութիւնները թռիչքը կը փրկեն: Լուսինին հասնիլը այնուհետեւ իրագործելի կը թուի:

20 յուլիս 1969-ին «Ափոլլո 11» անջրպետանաւը կը բաժնուի հրթիռէն: Դեպի լուսին էջը կը սկսի: Երբ յանկարծ խուճապը կը տիրէ... լուսնի մակերեսին

դպնալէ երեք վայրկեան առաջ համակարգիչը կանգ կ'առնէ, եւ ահագանգը կը հնչէ: Սակայն Մարկարեթ նախատեսած էր ամէն տեսակի խանգարումներ եւ համակարգիչը օժտած՝ պետք եղած ծրագիրներով: Անջրպետանաւի համակարգչային դրու-թիւնը կը տոկայ... Արմաթորնկ եւ Ալտրին կրնան վերջապէս իրենց ոտքերը դնել լուսնի մակերեսին վրայ: «Մարդկութեան համար փոքրիկ քայլ մը», որ կարելի եղած է Մարկարեթ Համիլթոնի համակարգիչի լեզուի ծրագիրներուն:

ԱՆՀԱՒԱՏԱՆԻ, ԲԱՅՑ ԻՐԱՒ

■ Գիտնականները կ'ենթադրեն, թէ շանաձուկերը գոյները չեն զանազաներ:



■ Յունաստանի առաջին Ողիմպիական խաղերուն ընթացքին մարզիկները պանիրով կարկանդակ կ'ունեին:

■ Մեր մարմնին մէջ գոյութիւն ունին մօտաւորապէս չորս միլիոն քրտինքի գեղձեր:

■ Գոյութիւն ունի երգչախումբ մը, որ կը գործածէ ինքնաշարժի կտորներէ շինուած երաժշտական գործիքներ:

■ Աշխարհի վրայ գոյութիւն ունին աւելի քան 1900 միջատներու տեսակներ, որոնք կ'ուտուին:

■ Մեծ կոկորդիլոսները կրնան ապրիլ աւելի քան մէկ տարի՝ առանց ուտելու:

■ Աստղանաւորդ մը կրցաւ ռաշտիժամի յայտագիր մը ներկայացնել անջրպետէն:

■ Կարգ մը խոզեր ունին զանգուր մազեր:

■ Համալսարանական ութ ուսանողներ մասնակցեցան ձմերուկ ուտելու մրցումի մը՝ երկու ասիական փիղերու դեմ... մարդ արարածները պարտուեցան:



■ Գիտնականները կը մտածեն, որ կարգ մը մոլորակներու վրայ ապակի կ'անձրեւէ:

■ Հիւսիսային Զորեայի մէջ ոճիր կը համարուի ճիւղ տաքատ հագուիլը:

■ Զինաստանի մէջ աւելի քան 30 միլիոն անձեր կ'ապրին քարայրներու մէջ:

■ Աղանիները կրնան իրենք զիրենք ճանչնալ հայելիին մէջ:

■ Մենք օրական մօտաւորապէս մէկ ժամ կ'անցընենք ծամելով:

■ Նորածինները արցունք չեն արտադրեր, երբ կուլան:

■ Կորիլանները կը քնանան բոյներու մէջ:



■ Կարգ մը թիթեռնիկներ կը խմեն կրիաներուն արցունքները:


■ Ա մ է Ն է Ն կարճ օդանաւային թռիչքը կը տեւէ միայն երկու վայրկեան:

■ Ներկայի մեր բջիջային հեռաձայնները շատ աւելի հզօր են, քան այն համակարգիչները, որոնք գործածուած են աստղանաւորդները լուսին դրկելու գործողութիւններուն ընթացքին:

■ Միացեալ Նահանգներու Սան Ֆրանսիսքո քաղաքին մէջ 3D տպագրութեան ընկերութիւն մը կրցաւ տուն մը «տպել» 24 ժամէն:




ԺԱՄԱՆՑ



Կրնա՞ս գտնել երկու պատկերներու միջեւ գոյութիւն ունեցող տասը տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու մարդամեքենաները:



Զանի՞ մանուկ կը տեսնես պատկերին մէջ:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՅԱՏՆԵՐՈՒ ՈՒՆԿԱԴՐՈՒԹԵԱՆ

Այն միութիւններն ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեռնարկներու եւ ընդունելութիւններու համար «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազգակ»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260115-241274, երկուշաբթին ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

**Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
(ԷՇԲԵՏԻԷ)**

ԱՍԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔԻ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹՅՈՒՆ

ԱՂՏԻ ԵՒ ԱՆՍԱՐԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԿՆԵՑԱՆ ՄԱԼԵԶԻԱ

Երեկ՝ ուրբաթ, 6 դեկտեմբերին, Ահտի եւ Անսարի պատուիրակությունները մեկնեցան Մալեզիոյ մայրաքաղաք Զուլայա Լամփուր, ուր երեքշաբթի, 10 դեկտեմբերին տեղի պիտի ունենայ Ասիոյ ֆուբալի բաժակի մրցաշարքին վիճակաձգութիւնը։

Անսարի պատուիրակութեան մաս կը կազմեն Ապաս Յասսան եւ Պիլալ Ֆրէյժ, իսկ Ահտի պատուիրակութեան՝ Սոհամետ Շըրրի եւ Եուսեֆ Եունես։



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՒՈՅԵԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՎ ԶԱՆԳՐՈՒՄՆՈՎ ԿԱՏԱՐԵԼԸ ԿՐՆԱՅ ՆՎԱՏՈՒԼ ՈՉ ՕՐԻՆԱԿԱՆ



Լիբանանեան մամուլը երեկ անդրադարձաւ Լիբանանի ֆուբալի ֆետերասիոնին գումարած ժողովին եւ այն տեղեկութիւններուն, որ ըստ շրջանառութեան դրուած ոչ պաշտօնական տուեալներու, Լիբանանի ֆուբալի դադրած ախոյեանութիւնը պիտի սկսի, սակայն միայն մեկ հանգրուանով եւ ոչ թէ երթուդարձի դրութեամբ։


Ֆուբալի մասնագետներու համաձայն, ասիկա կը նկատուի ոչ օրինական, բացի այն պարագայէն, եթէ ֆետերասիոնը կայացնէ համագումար մը, որուն ընթացքին փոփոխութեան ենթարկէ ներքին կանոնագիրը եւ ցարդ տեղի ունեցած բոլոր մրցումներուն արդիւնքները չեղեալ նկատելով սկսի միայն մեկ հանգրուանով ախոյեանութիւն մը։

Սակայն կը կարծուի, որ ատիկա ես կրնայ ըլլալ ոչ օրինական՝ նկատի ունենալով, որ ֆետերասիոնը իրաւունք չունի սկսած ախոյեանութեան մը արդիւնքները չեղեալ նկատել եւ նորին սկսիլ, նոյնիսկ եթէ այդ համագումարին մասնակցած ժողովականները անոր համաձայն գտնուին, որովհետեւ ֆուբալի յստակ օրէնք մը կայ, որ կ'ըսէ, թէ սկսած ախոյեանութեան կամ մրցաշարքի մը մէջ ոչ մէկ փոփոխութիւն կարելի է մտցնել։

ՓԻՅԵԼԼԻ ՇԱՏ ՄՕՏ Է ԶԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՒՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ

Հայկական լրատուամիջոցներ յայտնեցին, որ Հայաստանի ֆուբալի ազգային խումբի նախկին միջնապահ Մարքոս Փիյեւի առաջարկներ ստացած է թանկ մը ակումբներէ։

35 տարեկան ֆուբալիստը շատ մօտ է ֆուբալիստի իր արհեստավարժ ասպարեզը շարունակելու Հայաստանի ֆուբալի ախոյեանութեան մրցումներուն։



«ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.»-Ի ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄԵՎ ԿԱՐԾԻՔԸ. «ՕՖ ՍԱՅՏ»-Ի ԳԾՈՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԷՏԶ Է ԿԱՏԱՐՈՒՄԸ»

Անգլիական «Միրըր»-ի հետ իր ունեցած մէկ հարցազրոյցին ընթացքին, «Եու. Է. Էֆ. Ա.»-ի նախագահ Ալեքսանտր Չեֆերին ըսաւ, որ «**օֆ սայտ**»-ին գծով պետք է նոր օրէնք մը շուտով գործադրութեան դրուի կազմակերպութեան կողմէ։

Ան ըսաւ, որ «շատ յաճախ ֆուբալիստներուն կոլերը չեղեալ կը նկատուին։ Եթէ կոլ նշանակող մը երկար ընթիւն ենեայ, ատիկա կը սեպուի «**օֆ սայտ**»։ Մենք պետք է առաջարկենք, որ «**օֆ սայտ**»-ի գծին 10-20 սմ ղուրս մարզիկներուն նշանակած կոլերը նկատի առնուին իբրեւ կոլ եւ ոչ թէ «**օֆ սայտ**»։



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ ԱՒՈՅԵԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՄՐՑԱՇԱՐՔԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՍԱՆ ԵՒ ՍԿԱՍԱՆ ԹՈՒԿԱԿԱՆՆԵՐԸ ՅՍՏԱԿԱՑԱՆ

Ներկայութեամբ իր անդամներուն մեծամասնութեան, Լիբանանի ֆուբալի ֆետերասիոնը իր գումարած ժողովին տուաւ կարգ մը որոշումներ։

Որոշուեցաւ Ա. դասակարգի կիսատ մնացած ախոյեանութիւնը վերսկսիլ 24 յունուար 2020-էն սկսեալ, մինչ Ա., Բ. եւ Գ. հանգրուանէն յետաձգուած մրցումները պիտի կատարուին 12 յունուարէն սկսեալ։

Բ. դասակարգի ախոյեանութիւնը պիտի վերսկսի 24 յունուարին, մինչ Գ. դասակարգին ազդանշանը պիտի տրուի 31 յունուարին։

Լիբանանի ֆուբալի բաժակի մրցա-

շարքին մրցումները պիտի վերսկսին 17 յունուարին, ֆուբալի բաժակի մրցաշարքը պիտի սկսի 26 յունուարին, ֆուբալի Ա. դասակարգի ախոյեանութիւնը՝ 15 մարտին, մինչ Բ. եւ Գ. դասակարգի ախոյեանութիւնները՝ 1 փետրուարին։

12-17 դեկտեմբերին Լիբանանի 15 տարեկանէն վար աղջկանց ազգային խումբը Յորդանանի մէջ իր մասնակցութիւնը պիտի բերէ Արեւմտեան Ասիոյ երկրորդ ախոյեանութեան։

Լիբանանեան պատուիրակութիւնը պիտի գլխաւորէ Համբիկ Միսաքեան։

ԶԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԵՒ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Երեկ Հայաստանի ֆուբալի ֆետերասիոնի գրասենեակին մէջ տեղի ունեցած մամլոյ ասուլիսին ընթացքին, ֆետերասիոնը հրապարակեց նախագահի եւ գործադիր կոմիտէի անդամներու թեկնածուներուն անունները։

Նախագահի ընտրութիւններուն կը մասնակցին Ուրարտուի եւ Վանի կողմէ առաջադրուած, ֆետերասիոնի փոխնախագահ Արմէն Մելիքեւեանը, Անի ակումբի նախագահ Խորէն Յովհաննիսեանը եւ Լոռիի նախագահ Թովմաս Գրիգորեանը։

Այս մասին յայտարարութեամբ մը ելոյթ



ունեցաւ ֆետերասիոնի ֆուբալի բաժանմունքի ղեկավար, ընդհանուր քարտուղարի տեղակալ Արթուր Ազարեան։

Ֆետերասիոնը մերժեց Փիւնիկի կողմէ առաջադրուած Արարատ - Կիպրոսի հիմնադիր Արսէն Աղաջանեանի թեկնածուութիւնը։

Փիւնիկի կողմէ ներկայացուած փաստաթուղթերուն մէջ ֆետերասիոնին կանոնագիրին չհամապատասխանող եւ պակասաւոր թղթածրարին պատճառով։

Ինչ կը վերաբերի գործադիր կոմիտէի ընտրութիւններուն, 16 աթոռի համար առաջադրուած են 24 թեկնածուներ։

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ ՊԻՏԻ ՏԵՂԱԴՐԷ ՄԵՍՍԻ ԸՐՁԱՆԸ

Սպանիոյ ֆուբալի ֆետերասիոնը որոշեց Պարսելոնայի արժանթինցի յառաջապահ Լիոնել Մեսսիի արձանը տեղադրել Լաս Ռոսասի շրջանին մէջ, ուր կը գտնուի ֆետերասիոնին մեկ գրասենեակը։

Հոն կը գտնուին նաեւ Տիեկօ Մարատոնայի, Ալֆրետօ Տի Սթեֆանոյի եւ Փելէի արձանները։

Ֆետերասիոնը ցարդ որոշում չէ տուած, թէ այդ արձանը ե՞րբ պիտի տեղադրուի։ Մեսսիի արհեստավարժ ասպարեզին աւարտէ՛ն ետք՝ նկատի ունենալով, որ ան ցարդ ֆուբալ կը խաղայ։

32 տարեկան յառաջապահը վերջերս տիրացաւ «Ոսկեի գնդակ»-ին՝ 6-րդ անգամ ըլլալով։



«ԷՆ. ՊԻ. ԷՅ.» - ՈՌԵԹՅ ՅԱՐԹԵՅ ԳՈՐԾՈՂ ԱՒՈՅԵԱՆ ՌԵՓԹԸՐԶԻՆ - ՊՈՒԹԸՐ ՆՇԱՆԱԿԵՅ 44 ԿԷՏ

«ԷՆ. ՊԻ. Էյ.»-ի պատքեբալի ախոյեանութեան ծիրին մէջ, երեկ տեղի ունեցած մրցումներուն, Հիուսթըն Ռոքեթս յաղթական վերադարձաւ Թորոնթօյէն (Քանատա), ուր յաղթեց դաշտին տիրոջ՝ երկրին գործող ախոյեանին Ռեփթըրզին՝ 119-109 արդիւնքով։

Յաղթական կազմէն Ռասըլ Ուեսթօրը թրփով **տասպըլ** մը իրագործեց (19 կէտ, 13 **ռիպաուստ**, 11 **Էսիթթ**), մինչ անոր խմբակցի Ճէյմս Հարտեն նշանակեց 23 կէտ։

Ֆետիքս Սանգ երկարաձգումէն ետք 139-132 արդիւնքով յաղթական վերադարձաւ Նիւ Օրլինսի դաշտէն։

Յաղթական կազմէն Տեւին Պուքըր նշանակեց 44 կէտ։

Ուաշինկթըն Ուիզըրտս 119-113 արդիւնքով յաղթեց իր հիւրին՝ Ֆիլատելֆիա Սիթըրզին, մինչ չորրորդ եւ վերջին մրցումին, Նիւ Եորք Լիքս 129-92 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Տենսլըր Նալքթընէ։



Ռասըլ Ուեսթօրը (թիւ 0)՝ երկուան մրցումին



Տեւին Պուքըր (թիւ 1)

ԷՎԸՐԹԸՆ ՊԱՇՏՏՈՆԱԿ ԸՐԱՒ ԻՐ ՄԱՐԶԻԶԸ

Անգլիական «Փրեմիեր լիկ»-ի կազմերէն Էվըրթընի ղեկավարութիւնը պաշտօնանկ ըրաւ խումբի փորթուգալցի մարզիչ Մարքո Սիլվան՝ կազմին արձանագրած ձախող արդիւնքներուն պատճառով։

Մանաւանդ Լիվըրփուլ քաղաքի **տերալիի** մրցումին կազմին կրած ծանր պարտութիւնը՝ Լիվըրփուլէն (5-2), բաւական դժուարամարս եղաւ ակումբին պատասխանատուներուն համար։

Ան Էվըրթընի մարզիչ նշանակուած էր մայիս 2018-ին։

«Փրեմիեր լիկ»-ի 16-րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, Էվըրթըն 14 կէտով կը գրաւէ 18-րդ եւ վտանգաւոր դիրքը։



ՃԱՏՐԱԿ

ԳԱՔՐԻԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՍԱՑԱՒ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՐԱԳ ՃԱՏՐԱԿԻ ԱՒՈՅԵԱՆ



Հայաստանի ճատրակի ազգային հաւաքականի անդամ Գաբրիէլ Սարգսեան հանդիսացաւ Եւրոպայի արագ ճատրակի ախոյեան։

Ան առաւելագոյն 13 կէտէն ապահովելով 10,5 կէտ, լրացուցիչ կէտերով հանդիսացաւ ախոյեան։

ԵՐՈՂԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ. ՇԱՐԱԹԱՎԵՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ.

- ԱՅՍՕՐ՝ ՄԱՆՉԵՍԹԸՐ ԶԱՐԱՔԻ ՏԵՐՊԻՆ

- ԼԱՑԻՕ ՌՈՍԱ - ԵՈՒՎԵՆԹՈՒՄ ԵՒ ՄԵՕՆՇԸՆԿԼԱՏՊԱՆ - ՊԱՅԵՐՆ ՄԻՆԻՆ՝ ՏԱՔ ՃԱԿԱՏՈՒՄՆԵՐ

Այս շաբաթավերջին կատարուելիք եւրոպական ֆուբալի ախոյեանութեան ծիրին մէջ, տեղի պիտի ունենան բաւական հետաքրքրական ճակատումներ։

Անգլիոյ մէջ, բաւական կարեւոր ճակատումի մը ընթացքին, իրարու դէմ պիտի մրցին Մանչեսթըր Սիթի եւ Մանչեսթըր Եունայթըդ՝ Մանչեսթըրեան **տերալիին**։

Իտալիոյ մէջ, երկրին գործող ախոյեան Եուվենթուս բաւական կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Լացիօ Ռոմայի դաշտը։

Այլ կարեւոր մրցում մը ունի կատարելիք Գերմանիոյ գործող ախոյեան Պայերն Մինխի, երբ այցելէ Մեոնշընկ-լատպախի դաշտը։

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուսի ժամանակացոյցով. փակագիծերուն մէջ նշուած են անոնց գրաւած դիրքերը).

ԱՆԳԼԻԱ. 16-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ.	ԺԱՄ
ՇԱՐԱԹ	
Էվըրթըն (18) - Չելսի (4)	14:30
Պուրնըմաուք (14) - Լիվըրփուլ (1)	17:00
Թորթնհաւմ (8) - Պըրնի (12)	17:00
Ուաթֆորտ (20) - Զրիսթալ Փալաս (7)	
Մանչեսթըր Սիթի (3) - Մանչեսթըր Եունայթըտ (6)	19:30

ԿԻՐԱԿԻ	
Աթոն Վիլա (16) - Լայսթըր Սիթի (2)	16:00
Նիւքասթլ (11) - Սաութհեմթիթըն (17)	16:00
Նորուիչ (19) - Շեֆիլտ Եունայթըտ (9)	16:00
Պրայթըն (13) - Վուլվզ (5)	18:30
ԵՐԱՌԵԱՐԹԻ	
Ուեսթ Համ (15) - Արսենալ (10)	22:00
ՄՊԱՆԻԱ. 16-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ.	
ՇԱՐԱԹ	
Ռեալ Մատրիտ (2) - Եսփանիոլ (19)	14:00
Կրանտա (10) - Ալաւես (14)	17:00
Լեվանթ (11) - Վալենսիա (8)	19:30
Պարսելոնա (1) - Մայորքա (17)	22:00
ԿԻՐԱԿԻ	
Եյպար (16) - Կեթաֆէ (7)	13:00
Ռեալ Պէթիս (12) - Աթլետիքօ Պիլաո (5)	15:00
Ռեալ Վալատոլիտ (15) - Ռեալ Սոսիետատ (4)	17:00
Լեկանես (20) - Սելթա Վիկօ (18)	19:30
Օաստուա (9) - Սելվիլա (3)	22:00

ԻՏԱԼԻԱ. 15-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ.	
ՇԱՐԱԹ	
Աթալանթա (6) - Վերոնա (8)	16:00
Ուտինեզէ (16) - Նափոլի (7)	19:00
Լացիօ Ռոմա (3) - Եուվենթուս (2)	21:45
ԿԻՐԱԿԻ	
Լեչէ (15) - Ճենովա (18)	13:30
Թորինօ (10) - Ֆիորենթինա (13)	16:00
ՍՓԼԼ (19) - Պրեշիա (20)	16:00
Սասուոլօ (14) - Զալիարի (4)	16:00
Սամտորիա (17) - Փարմա (9)	19:00
Պոլոնիա (12) - Ա. Սէ. Միլան (11)	21:45
ԳԵՐՄԱՆԻԱ. 14-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ.	
ՇԱՐԱԹ	
Պորուսիա Տորթմունտ (5) - Տիւսէլտըֆ (15)	16:30
Մեոնշընկլատպախ (1) - Պայերն Մինխի (4)	16:30
Օլդապուրկ (14) - Մայն-05 (12)	16:30
Լայփցիկ (2) - Հոֆենհայմ (8)	16:30
Ֆրայպուրկ (6) - Վոլֆսպուրկ (9)	16:30
Պայեր Լեյքըրուզըն (7) - Շալքէ (3)	19:30
ԿԻՐԱԿԻ	
Իւնիոն Պերլին (11) - Բօլոն (17)	16:30
Վերտըր Պրեմն (13) - Փատերպոլն (18)	19:00
ՖՐԱՆՍԱ. 17-ՐԴ ԶԱՆԳՐՈՒՄ.	
ՇԱՐԱԹ	
Մոնփելիէ (6) - Փարիզ Սեն Ժերմեն (1)	18:30
Մոնպօ (13) - Ամիեն (17)	21:00
Ռենն (7) - Սենտ (8)	21:00
Նիս (14) - Սեն (18)	21:00
Սթրազպուրկ (15) - Թուլուզ (20)	21:00
ԿԻՐԱԿԻ	
Ռեն (11) - Սենթ Էթիեն (5)	16:00
Նանթ (9) - Տիոն (16)	18:00
Մարսել (2) - Պորսօ (3)	22:00

